ՍԻՄՈՆ ՍՆԳՐՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հայցորդ

ԱՌԵՎՏՐԻ ԲԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անդամակցելով Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ)՝ Հայաստանն արդեն իսկ ստանձնել է առևտրի ազատականացման, ազգային շուկաների ինստիտուցիոնալ բացման պարտավորություններ: Ընդհանուր առմամբ, առևտրի ազատականացման գործընթացները ԱՀԿ շրջանակում դանդաղել են, մինչդեռ, այդ գործընթացներն արագացել են տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի շրջանակներում, ինչն անշուշտ չի վերացնում հովանավորչություն պահանջող զգայուն ոլորտները: Կատարված վերլուծությունը փաստում է, որ «մինչ» ինտեգրումը և ինտեգրումից «հետո» առևտրի ազատականացումը դրականորեն է անդրադարձել ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների վրա: Բայց արտաքին առևտրային գործընկերների հետ շուկայի հետագա ազատականացումը, երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքումը՝ առանց շուկաների փոխադարձ բացման հետևանքների վերլուծության, կարող են հանգեցնել փոխադարձ առևտրում բացասական հաշվեմնացորդի աճին, ներքին շուկա ներմուծվող ավելի մրցունակ ապրանքների ներթափանցմանը, ուստի, ԵԱՏՄ հետագա ընդլայնումը պետք է հենվի շահերի բազմակողմանի ուսումնասիրության վրա:

Հիմնաբառեր. *առևտրի բացություն, ԵԱՏՄ, բաց տնտեսություն, ԱՀԿ, մաքսատուրքեր*

JEL: F10, F15

Ներածություն: Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլի կարևորագույն բնորոշիչներից են աշխատանքի միջազգային բաժանման խորացումը, ազգային տնտեսությունների միջև բազմակողմ փոխկապ-

վածությունների ընդլայնումը, արտադրության գործոնների (աշխատուժ, կապիտալ, տեխնոլոգիաներ), ինչպես նաև տեղեկատվության միջազգային շարժի ինտենսիվության բարձր աստիճանը: Արդի պայմաններում միջազգային տնտեսական հարաբերությունների սուբյեկտները, չնայած պետական սահմանների առկայությանը, գործում են որպես միասնական գլոբալ տնտեսության բաղկացուցիչներ: Տեղի է ունենում տնտեսական կյանքի միջազգայնացման և գլոբալացման խորացում, որը թույլ է տալիս մի քանի անգամ ավելացնել համաշխարհային տնտեսության բազմամակարդակ կապերի արդյունավետությունը: Այդ կապերը երկրները միավորում են միասնական համաշխարհային տնտեսության տիրույթում: Տեղի է ունենում պետությունների «սահմանների վերացում», աշխատուժի միգրացիան, կադրերի պատրաստումը, մասնագետների փոխանակումը ստանում են միջազգային բնույթ, ձևավորվում է կապիտալի միջպետական կառավարման միասնական համակարգ, ընդհանրական են դառնում տնտեսական քաղաքականության իրականացման կառուցակարգերը և այլն:

Տարածաշրջանի երկրների միջև տնտեսական, քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ ինտեգրման գործընթացները տեղի են ունենում քայլ առ քայլ՝ սկիզբ առնելով արտոնյալ առևտրային համաձայնագրերից, անցում կատարելով Մաքսային միությանը, ընդհանուր շուկային, վերածվելով տնտեսական և արժութային միության և, ի վերջո, իրականացնում են համակարգված արտաքին առևտրային և տնտեսական քաղաքականություն: Այս գործընթացն ուղեկցվում է ինտեգրվող երկրների տնտեսական կյանքի ազատականացման հետզհետե խորացող գործընթացներով: Ընդ որում, կարելի է պնդել, որ ինտեգրման գործընթացներում երկրների ակտիվ մասնակցությունը հանգեցնում է նրան, որ երկրներն այլևս չեն կարողանում անմասն մնալ տարածաշրջանի փոխկապակցվող տնտեսական կյանքից և ստիպված են լինում դառնալ բազմանդամ տնտեսական օրգանիզմի մասնիկ:

Ի տարբերություն զարգացած երկրների՝ զարգացող երկրները, տնտեսության բացության մակարդակը բարելավելուց առաջ, պետք է խորությամբ վերակազմավորեն տնտեսությունը: Հաճախ դա իրականացվում է Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի վերահսկողության ներքո: Այդ միջոցառումները ներառում են սակագնային և ոչ սակագնային արգելքների վերացումը կամ կրճատումը, արտահանմանն ուղղված արտադրության խթանումը, արժութային շուկայի և կապիտալի միջազգային շարժի ազատականացումը և այլն: Այլ հավասար պայմաններում, այս միջոցառումները կարող են հանգեցնել տնտեսության բացության մակարդակի բարձրացմանը: Սակայն, հստակ պատասխան այն հարցին, թե արդյոք տնտեսության բացության բարձր մակարդակը հանգեցնում է երկրի տնտեսական զարգացման մակարդակի բարձրացմանը, տնտեսագիտական գրականության մեջ առկա չէ[1]:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում զարգացող երկրները մեծացրել են իրենց կախվածությունը արտաքին առևտրից և որդեգրել են առևտրի ազատականացման քաղաքականություն: Այնուամենայնիվ, այդ երկրների

[1] Տե՛ս Eusuzfvazai Z., Do more open countries have a higher growth rate but more inequality? Atlantic Economic Journal, March, 1998, Vol. 26, Issue 1, էջ 32:

մասնաբաժինը համաշխարհային առևտրում աննշան է, իսկ արտահանման կառուցվածքը՝ խիստ կենտրոնացված: Պարամետրիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ զարգացող երկրները, որոնք ավելի բաց են առևտրի համար, հակված են ունենալու արտահանման ավելի բազմազանեցված կառուցվածք, քան առևտրի համար պակաս բաց երկրները: Վերլուծության արդյունքում կփորձենք պարզել, թե ցածր սակագները և առևտրի ազատականացումը ինչպես են ազդել ԵԱՏՄ անդամ-երկրների փոխադարձ առևտրի ծավալների, ինտենսիվության և կառուցվածքի վրա:

Ինտեգրման գործընթացներում կարևոր է այն հարցը, թե որ երկիրն առաջինը կբռնի տնտեսության բացության ուղին, քանի որ ենթադրվում է, որ առաջինը տնտեսությունը բացող երկիրը կարող է կրել ամենամեծ վնասը: Այդ պատճառով գործընկեր երկրները հաճախ բացության որոշման ընդունման առումով հապաղում են: Օրինակ, այդպիսի քաղաքականություն էին որդեգրել Ավստրիան, Ֆինլանդիան և Շվեդիան, որոնք մինչև ԵՄ-ին միանալը, ունեին դիտորդի կարգավիճակ և սպասում էին ավելի հարմար պահի՝ ինտեգրացիոն միավորմանը միանալու համար:

Այնուամենայնիվ, թեև տնտեսության միաժամանակյա բացությունը ինտեգրացիոն խմբավորման անդամ բոլոր երկրներին բերում է մեծ օգուտներ, իրական կյանքում դժվար է պատկերացնել, որ բոլոր երկրները միաժամանակ սեփական տնտեսությունները կդարձնեն «թափանցիկ»:

Գրականության ակնարկ: Տնտեսությունների բացության վերաբերյալ տնտեսագիտական գրականության մեջ ձևավորվել է երկու տեսակետ. որոշ հետազոտողներ (*Դ. Դոլլար, Ջ. Սակե, Ա. Ռոդրիկ*)[2] կարծում են, որ տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակն ուղիղ համեմատական է երկրի տնտեսության բացության մակարդակին: Տնտեսագետների մյուս խումբը (*Գ. Ֆեդեռ, Ռ. Ռեմ*)[3] կարծում է, որ տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի կարելի է հասնել՝ նվազեցնելով հասարակության աղքատ և հարուստ խավերի միջև խզումը:

Կարելի է պնդել, որ երկու խումբ տնտեսագետներն էլ այս կամ այն չափով ճշմարտացի են: Տնտեսության բացությունը տնտեսական աճի վրա կարող է ունենալ երկակի ազդեցություն. մի կողմից դրական՝ խթանելով տնտեսական զարգացումը, մյուս կողմից բացասական՝ եկամուտների ոչ հավասարաչափ բաշխման առումով: Հետևաբար, տնտեսության բացության ազդեցության զուտ արդյունքը կախված է այն հանգամանքից, թե տվյալ երկրում որ էֆեկտը կունենա ավելի հստակ դրսևորում: Այնուամենայնիվ, լրիվ բաց տնտեսություններ աշխարհում գոյություն չունեն, քանի որ դրանք ոչ միայն չեն կարող խթանել տնտեսական աճն ու զարգացումը, այլ նաև իրական վտանգ են երկրի ազգային, հատկապես՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից: Կարծում ենք, որ ցանկացած բաց տնտեսություն պետական կարգավորման կարիք ունի:

Արդի ժամանակաշրջանում բաց տնտեսություն ասելով՝ հասկանում ենք ազգային տնտեսությունը համաշխարհային տնտեսության հետ կապող մի

---

[2] Տե՛ս **Гринец И.А.**, **Казначеев П.Ф.**, Экономический рост и институциональное развитие в нефтегазовых странах, ЭКО-2015 N 4, էջ 105-115:

[3] Տե՛ս **Корицкий А.В.**, Влияние человеческого капитала на экономический рост, учеб. пособие, Новосибирск: НГАСУ (Сибстрин), 2013, էջ 44:

շարք ուղիների առկայությունը: Դրանք են՝ ապրանքների և ծառայությունների միջազգային առևտուրը, արտադրության գործոնների միջազգային շարժը, գիտատեխնիկական արդյունքների և տեղեկատվության փոխանակությունը, արժույթների փոխադարձ փոխարկելիությունը և այլն: Այդ առիթով կանադացի գիտնական *Դ. Լեյդլերը* բաց տնտեսությունը բնութագրում է որպես տնտեսություն, որն այնքան է ներգրավված համաշխարհային կապերում, որ անհրաժեշտություն է առաջանում հաշվառելու ներքին տնտեսության և մնացած աշխարհի փոխկապվածությունները[4]: Ամերիկացի տնտեսագետ *Ն. Մենքյուն* բաց է համարում այն տնտեսությունը, որի քաղաքացիները կարող են առանց սահմանափակումների գործարքներ կատարել ապրանքների և կապիտալի միջազգային շուկաներում[5]: Որոշ տնտեսագետներ, բաց տնտեսություն ասելով, հասկանում են այնպիսի տնտեսություն, որի զարգացման ուղղությունները որոշվում են համաշխարհային տնտեսության զարգացման միտումներով: Ընդ որում, ըստ հեղինակների, արտաքին առևտրային շրջանառությունը հասնում է այնպիսի մակարդակի, որ սկսում է խթանել տվյալ երկրի ընդհանուր տնտեսական զարգացումը[6]: Կարծիք կա, որ արդի պայմաններում արտաքին տնտեսական կապերի խթանող կամ արգելակող ազդեցությունը երկրի տնտեսական զարգացման վրա ավելի ակնառու է դառնում այն դեպքում, երբ արտաքին առևտրի շրջանառությունը հասնում է ՀՆԱ 25%-ի: Տնտեսագետ *Դ. Գալոյանը* կարծում է, որ արտահանման կառուցվածքում գիտատար, բարձր տեխնոլոգիական ապրանքների մեծ տեսակարար կշիռն է արտացոլում երկրների փոխլրացման, արտաքին շուկաներում ազգային արդյունքների նկատմամբ ձևավորված պահանջարկի բավարարման հնարավորությունը: Ուստի, որպես տնտեսության բացության մակարդակն արտացոլող ցուցանիշ, առաջարկում է, այսպես կոչված, արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասը[7]:

Հետազոտության մեթոդաբանություն: Ինտեգրման արդյունքների գնահատման մեթոդները բավականաչափ ուսումնասիրված են ակադեմիական գրականությունում, միջազգային կազմակերպությունների, զարգացման ինստիտուտների վերլուծություններում: Էմպիրիկ տեսանկյունից, ինտեգրացիոն գործընթացների զարգացման արդյունքները, առաջին հերթին, արտացոլվում են առևտրային հոսքերի փոփոխության վրա: Միևնույն ժամանակ, առևտրի ազատականացման ուսումնասիրությունը ինտեգրացիոն փոխգործակցության առաջին կարգի արդյունք է: Առևտրային հոսքերի միջոցով ինտեգրման գնահատման մեթոդաբանություն է կիրառել նաև *Բ. Բալասան*: Ինտեգրման տեսություններում լայնորեն կիրառվում են *«մինչ» ինտեգրում* (ex ante) և *ինտեգրումից «հետո»* (ex post) մեթոդները, որոնք էլ կփորձենք կիրառել վերլուծությունն իրականացնելիս:

---

[4] Տե՛ս Laidler D.W., Bryce A.J., Wilbourn P., Managing the Development of Previously Developed Land: A Client's Guide. Construction Industry Research & Information Association, UK, 2002, էջ 16:

[5] Տե՛ս **Мэнкью Н.Г.,** Макроэкономика. Пер. с англ., М., Изд-во МГУ, 1994, էջ 283-286:

[6] Տե՛ս **Ломакин В.К.,** Мировая экономика, М., НИТИДАННА, 2007, էջ 15:

[7] Տե՛ս **Դ. Գալոյան**, Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հիմնախնդիրները և հեռանկարները, Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2014, էջ 39:

Վերլուծության ընթացքում կիրառվել են նաև համակարգային վերլուծության, վիճակագրական, ինդիկատիվ և սիներգետիկ մեթոդներ:

Վերլուծություն: Վերջին տարիներին համաշխարհային առևտուրը բախվում է նոր դժվարությունների, քանի որ աճում են տնտեսական քաղաքականության անորոշությունն ու լարվածությունը: Առևտրի և ներդրումների ազատականացման կողմնակիցները կարծում են, որ տնտեսության բացությունը տնտեսական աճի կարևորագույն գործոններից է: Իրականում, ազատականացումը կայուն և մշտական տնտեսական աճի երաշխիք չէ: Դեպի ազգային շուկաներ ապրանքների, ծառայությունների, կապիտալի մուտքի ազատականացումը միջազգային առևտրի զարգացման և վերազգային ներդրումների լրացուցիչ խթան է:

Թեև տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տնտեսության բացության մակարդակը բնութագրող մի շարք ցուցանիշներ, այնուամենայնիվ, իրական բացության մակարդակը հնարավոր է գնահատել՝ հաշվի առնելով արտահանման և ներմուծման կառուցվածքի, մաքսային, արժութային, հարկային, վարկային և ներդրումային քաղաքականությունները: Վերոնշյալն էական ազդեցություն ունի ազգային տնտեսության՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման մասշտաբների և ձևերի վրա:

Տնտեսության բացությունը հիմնականում գնահատում են համաշխարհային առևտրում երկրի ներգրավվածության աստիճանով, իսկ որպես համապատասխան ցուցանիշ կիրառում են արտահանման կամ արտաքին առևտրային քվոտան:

Ուսումնասիրելով տնտեսագիտական գրականության մեջ առկա՝ տնտեսության բացությանը վերաբերող մոտեցումները, առանձնացրել ենք բաց տնտեսության հետևյալ հատկանիշները, որոնք կարող են տեղ գտնել միկրո- և մակրոմակարդակներում: Այսպես,

1. *միկրոմակարդակում՝*
   - բոլոր ձեռնարկությունների ազատ մուտք ապրանքների, ծառայությունների և կապիտալի համաշխարհային շուկաներ,
   - տնտեսական գործարքների իրականացման ժամանակ տնտեսավարող սուբյեկտների կողմից հայրենական և օտարերկրյա գործընկերների ու շուկաների ընտրության ազատություն,
   - արտաքին տնտեսական գործունեության վերածում ձեռնարկության տնտեսական գործունեության անբաժանելի մասի:
2. *մակրոմակարդակում՝*
   - երկրի կայուն արտաքին տնտեսական մասնագիտացման մակարդակ, որի դեպքում միջազգային ապրանքափոխանակությունը տեղի է ունենում արտադրության համեմատական ծախսերի և արտադրանքի որակի հիման վրա,
   - հիմնական սպառողական ապրանքների ազգային և միջազգային գների համամասնության համադրելիություն,
   - երկրի արժութաֆինանսական դրության կայունություն,
   - ներքին շուկայի բացություն օտարերկրյա մրցակցության հանդեպ՝ տեղական արտադրողների ճկուն պաշտպանության միջոցով,
   - օտարերկրյա կապիտալի պաշտպանության իրավական և տնտեսական երաշխիքների առկայություն,

- տեխնիկական, արդյունաբերական և սոցիալական քաղաքականության կողմնորոշում դեպի համաշխարհային ստանդարտներ և դրանց զարգացման միտումներ,
- երկրների անդամակցություն միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպություններին,
- արտաքին շուկաներում հայրենական արտահանողների հովանավորչություն:

Այս ցուցանիշների տարբեր համադրությունները պատկերացում են տալիս ազգային և համաշխարհային տնտեսության փոխադարձ կապի մասին և ցույց են տալիս, թե որքանով են առանձին երկրներն ինտեգրված համաշխարհային տնտեսությանը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Աշխարհի առաջատար երկրների արտահանման քվոտան 2017 թ.[8]

Երկիրը	ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	Արտահանման ծավալ (հազ. ԱՄՆ դոլար)	Արտահանման քվոտա (%)
Բրազիլիա	2055512	217825.8	10.59716
Չինաստան	12237782	2263346	18.49474
Դանիա	329865.5	102558.5	31.09102
Ֆինլանդիա	252246.6	68073.4	26.98688
Ֆրանսիա	2588893	535188.3	20.67248
Գերմանիա	3693204	1448190.4	39.2123
Իտալիա	1943835	507418.4	26.10398
Ճապոնիա	4872415	698130.5	14.32822
Նիդեռլանդներ	830572.6	652065.4	78.50793
Ռուսաստան	1577524	353548	22.41157
Իսպանիա	1314314	319531.1	24.31162
Շվեյցարիա	685234.1	299559.4	43.71636
Միացյալ Թագավորություն	2631228	441106.3	16.76428
ԱՄՆ	19589613	1546273	7.893331

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ի տնտեսությունը, չնայած առաջատար դիրքին, ավելի քիչ է ինտեգրված համաշխարհային տնտեսությանը, քան փոքր տնտեսություն ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Նիդեռլանդները, Շվեյցարիան, Դանիան, որոնց արտահանման քվոտան տատանվում է 31-78%-ի միջակայքում: Արտահանման քվոտայի շարժընթացի ուսումնասիրությունը թույլ կտա երկրների արտաքին տնտեսական կապերի ինտենսիվության աստիճանը գնահատել դրանց զարգացման տարբեր տարիներին: Ինչպես գիտենք, Մեծ դեպրեսիայի ժամանակաշրջանում բոլոր երկրները վարում էին ինքնապահովման քաղաքականություն, որի հետևանքով արտահանման քվոտան էապես նվազել էր: Սակայն Երկրորդ աշխարհամարտից հետո, ընդհակառակը, երկրները ճգնաժամային երևույթները հաղթահարեցին՝ միջազգային տնտեսական կապերն ընդլայնելու և խորացնելու ճանապարհով (գծապատկեր 1):

[8] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ https://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx կայքի տվյալների հիման վրա:



Գծապատկեր 1. ***Աշխարհի առաջատար երկրների արտահանման քվոտայի շարժընթացը*** *1970-2018 թթ. (%)*[9]

Համաշխարհային առևտրի և ՀՆԱ աճի տեմպերի կորուստը մասամբ պայմանավորված է խստացված դրամավարկային քաղաքականությամբ, ֆինանսական անկայունության և սակագների աճով: Առևտրի և ներդրումների ճանապարհին խոչընդոտների չկիրառման «բարձրաձայն հայտարարություններին» զուգահեռ, առավել բարենպաստության ռեժիմի սակագները աշխարհում թեև նվազել են, բայց՝ չափավոր տեմպերով, ընդամենը 1%-ային կետով:

Գծապատկեր 2. ***Առևտրի կարգավորման ոլորտում կիրառված միջամտությունների ընդհանուր թիվն ըստ տարիների***[10]

Ընդ որում, կիրառված պաշտպանիչ միջամտությունների շուրջ 35%-ը առևտրի պաշտպանական միջոցառումներ են, 20.9%-ը՝ սուբսիդիաներ (բա-

[9] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ https://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx կայքի տվյալների հիման վրա:

[10] https://www.globaltradealert.org/global_dynamics/day-to_0611

ցառությամբ արտահանման սուբսիդիաների), իսկ 14.4%-ը արտահանմանն առնչվող միջոցառումներ են (ներառյալ արտահանման սուբսիդիաները):

Առևտրի ազատականացման միջամտությունների 47.5%-ը բաժին է ընկնում սակագնային կարգավորումներին, 13.9%-ը՝ ոչ ավտոմատ լիցենզավորմանը և քվոտաներին, իսկ 11.2%-ը՝ արտահանմանն առնչվող միջոցառումներ են (ներառյալ արտահանման սուբսիդիաները):

Տնտեսության բացության մակարդակի բարձրացման ճանապարհով առևտրային հոսքերի վերակառուցման և ուղղությունների հստակեցման վերաբերյալ որոշումը հիմնականում ընդունվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական և տնտեսական ճնշումների ներքո: Նմանօրինակ առևտրային բարեփոխումները կարող են թելադրված լինել նաև այն հանգամանքով, որ ինտեգրվող երկրները համաձայնեցված արտաքին քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտություն ունեն:

ԵԱՏՄ անդամակցության համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում անդամ երկրների տնտեսությունների բացությունը և առևտրի շարունակական ազատականացումը: Համեմատությունների համար կիրառվող ցուցանիշներից է երկրի բացությունն ապրանքների առևտրում: Այս ցուցանիշի աճը վկայում է երկրի տնտեսության վրա փոխադարձ առևտրի հոսքերի ազդեցության աճի մասին, իսկ ինտեգրման տեսանկյունից նշանակում է ինտեգրացիոն կապերի բարելավում: Առևտրի ընդլայնումը նպաստում է տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացմանը, ինչը բնորոշվում է արտաքին աշխարհի հետ փոխկապվածության ինտենսիվությամբ: Առևտրի ազատականացումը արտադրության մասնագիտացման և արտահանման խթանման հնարավորություններ է ընձեռում:

ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության ներկայիս ուղղությունը արտաքին տնտեսական բացության ապահովումն է՝ ինչպես ԵԱՏՄ, այնպես էլ առանձին երկրների և խմբավորումների հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքումը: Անդամակցելով Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ)՝ Հայաստանն արդեն իսկ ստանձնել էր առևտրի ազատականացման, ազգային շուկաների ինստիտուցիոնալ բացման պարտավորություններ: Ընդհանուր առմամբ, առևտրի ազատականացման գործընթացները ԱՀԿ շրջանակում դանդաղել են, մինչդեռ, այդ գործընթացներն արագացել են տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի շրջանակներում, ինչն անշուշտ չի վերացնում հովանավորչություն պահանջող զգայուն ոլորտների խնդիրները:

Դառնալով ԱՀԿ անդամ՝ ՀՀ-ն կիրառում էր ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման պարզեցված համակարգ: Ապրանքային անվանումների շուրջ 73%-ի նկատմամբ կիրառվում էր 0% մաքսատուրք, միջին կշռված ներմուծման սակագինը բավականին ցածր էր, և ՀՀ առևտրային ռեժիմն ավելի ազատական էր, քան ստանձնած պարտավորությունների շրջանակը:

Անդամակցելով ԵԱՏՄ-ին՝ Հայաստանը մինչև 2022 թ. պետք է մաքսատուրքերն աստիճանաբար ներդաշնակեցնի միասնական մաքսային սակագնի հետ: Ընդ որում, Հայաստանին անցումային ժամանակահատված էր տրված՝ շուրջ 996 անուն ապրանքի (*գյուղատնտեսական մթերք,* այդ թվում՝ տավարի միս, խոզի միս, թռչնամիս և կաթնամթերք, ձավարեղեն, այդ թվում՝ ցորեն և բրինձ, *քիմիական նյութեր, պլաստմասսայե և ռետինե արտադ-*

րանք, տեքստիլ, հիմնական մետաղներ, մեքենաներ, տրանսպորտային միջոցներ և ճշգրիտ սարքավորումներ) նկատմամբ միասնական մաքսային սակագին կիրառելու հետաձգման հնարավորություն: Միասնական մաքսային սակագնի հիմքում գլխավորապես ՌԴ-ում կիրառվող մաքսատուրքերն են և ԱՀԿ շրջանակում Ռուսաստանի ստանձնած պարտավորությունները: Ընդգծենք, որ վերոնշյալ ապրանքների մեծ մասի ներմուծման մաքսատուրքերը զգալիորեն կբարձրանան մինչև 2022 թ.:

Աղյուսակ 2

ՀՀ անցումային ներմուծման մաքսատուրքեր (սակագնային դիրքերի քանակը, որոնք պետք է ներդաշնակեցվեն Եվրասիական տնտեսական միության մաքսային սակագնի հետ)[11]

	2018	2019	2020	2021	2022	Ընդամենը
Միս և մսից ենթամթերք	-	-	18	-	41	59
Բանջարեղեն		22	13		22	57
Կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպեր և յուղեր	-	-	3	-	2	5
Պատրաստի սննդամթերք. ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ, ինչպես նաև ծխախոտ և դրա փոխարինիչներ	2	2	14		3	21
Հանքային արտադրանք	-	-	22	-	-	22
Քիմիական և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	4	10	187	-	-	201
Պլաստմասսաներ և պլաստմասսայից պատրաստված արտադրատեսակներ, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված արտադրատեսակներ	2	-	12	34	-	48
Չմշակված մորթի, մշակված կաշի, բնական մորթի և արտադրատեսակներ դրանցից	-	-	4	-	-	4
Փայտանյութ և դրանից պատրաստված արտադրատեսակներ	-	-	11	3	-	14
Թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված արտադրատեսակներ	-	-	4	-	-	4
Մանածագործական նյութեր և մանածագործական արտադրատեսակներ	-	-	59	46		105
Կերամիկական արտադրատեսակներ. ապակի և դրանից պատրաստված արտադրատեսակներ	-	-	7	3	1	11
Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, մետաղներ	-	-	-	1	10	11
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված արտադրատեսակներ	1	-	48	5	-	54
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	-	2	30	12	3	47
Վերգետնյա տրանսպորտային միջոցներ			276			276
Բժշկական կամ վիրաբուժական գործիքներ և ապարատներ, ինչպես նաև ցանկացած տեսակի ժամացույցներ		9	11			20
Տարբեր արդյունաբերական ապրանքներ		1		1		2
Ընդամենը	9	46	719	110	82	966

[11] Կազմվել է համաձայն՝ ПРИЛОЖЕНИЕ № 4 к Договору о присоединении Республики Армения к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года. Перечень товаров и ставок, в отношении которых в течение переходного периода Республикой Армения применяются ставки ввозных таможенных пошлин, отличные от ставок Единого таможенного тарифа Евразийского экономического союза.

ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ առևտրային քաղաքականության բազմաթիվ ոլորտներում որոշումների ընդունման ազգային իրավասությունն անցավ ԵԱՏՄ-ին: Բացառություն էին կազմում ծառայությունների, մտավոր սեփականության իրավունքների առևտրային հարցերի, ներդրումային միջոցառումների շուրջ ԱՀԿ համաձայնագրերով կարգավորվող շրջանակները: Այս հարցերի շուրջ որոշումներ ընդունելիս Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (ԵՏՀ) հենվում է ԱՀԿ նորմատիվաիրավական բազայի վրա, բայց, միևնույն ժամանակ, կարող է ազդել բազմակողմ առևտրային համաձայնագրի որոշումների ընդունման վրա:

Քանի որ Հայաստանը ԵԱՏՄ անդամակցության պահին արդեն ԱՀԿ անդամ էր, ուստի պետք է վերանայեր ԱՀԿ ստանձնած պարտավորությունների շրջանակը: Այս համատեքստում ՀՀ-ն իրականացրեց երրորդ երկրների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կիրարկման ու ԵԱՏՄ միասնական սակագնի ու ՀՀ ներմուծման մաքսատուրքերի համեմատական վերլուծություն: ԵԱՏՄ անդամակցության տեսանկյունից, ՀՀ ամենախոցելի հարցը մաքսային պարտավորությունների շրջանակն էր:

Այստեղ ՀՀ հիմնական խնդիրն այն է, որ ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ-ն պարտավորվել է չգերազանցել մաքսատուրքերի որոշակի սահմանները: Բայց, ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված, մի շարք ապրանքների մաքսատուրքերի չափերը փոխվել են՝ գերազանցելով սահմանված մակարդակը: ԱՀԿ կառուցակարգերի համաձայն և բանակցային իրավունքի առկայության պարագայում՝ Հայաստանը կարող է բանակցություններ սկսել պայմանավորվածություն ունեցող երկրների հետ: Այս նպատակով Հայաստանը, 2016 թվականից սկսած, բանակցություններ է վարում Բրազիլիայի, Կանադայի, Թայվանի, Ուկրաինայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և Եվրամիության հետ:

Փաստորեն, մինչ ԵԱՏՄ անդամակցությունը, ՀՀ-ն բավականին ազատականացրել էր արտաքին առևտուրը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՀՀ շուկայի փոքր տարողությունը և տրանսպորտային խնդիրները, արդյունավետ տնտեսական քաղաքականություն մշակելու անհրաժեշտություն է առաջանում, որը կնպաստի արտահանման ծավալների աճին:

Առևտուրը ՀՀ տնտեսության կարևոր ոլորտներից է: 2010-2017 թթ. ապրանքների արտահանումը գրեթե կրկնակի ավելացել է՝ հասնելով ավելի քան 2 մլրդ ԱՄՆ դոլարի: 2019 թ. արտահանումը կազմել է 2872.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 9.2%-ով, իսկ ներմուծումն աճել է 11.4%-ով՝ կազմելով 4924.0 մլն ԱՄՆ դոլար, արդյունքում՝ արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդը կազմել է 2051.3 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 262.1 մլն ԱՄՆ դոլարով[12]: Արտաքին առևտրաշրջանառության 2016-2018 թթ. միջին աճը կազմել է 16.2%, արտահանմանը՝ 17.8%, իսկ ներմուծմանը՝ 15.8%[13]:

---

[12] ՀՀ վճարային հաշվեկշիռը 2019 թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԿԲ արտաքին հատվածի վիճակագրություն:

[13] http://www.irtek.am/views/act.aspx?aid=151628

Մշտական առևտրային պակասուրդը վկայում է կառուցվածքային անհավասարակշռության մասին, որը պայմանավորված է ցածր արտադրողականությամբ և համաշխարհային գների տատանումներից մեծ կախվածությամբ:

Գծապատկեր 3. ***ՀՀ արտահանման-ներմուծման շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար)***[14]

Թեև արտահանման կառուցվածքում շարունակում է գերիշխել հանքահումքային արտադրանքը՝ ի հաշիվ պղնձի հանքաքարի և խտանյութի, այնուհանդերձ, 2019 թ. ավելացել է նաև սարքերի և ապարատների, պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը:



Գծապատկեր 4. ***ԵԱՏՄ անդամ երկրների առևտրի բացությունը (%, 2000-2018 թթ., առևտուր/%, ՀՆԱ)***[16]

ՀՀ առևտրի բացության միջին ցուցանիշը 1990-2018 թթ. կազմել է 78.17%, ընդ որում՝ նվազագույնը՝ 2008 թ.՝ 55.7%, իսկ առավելագույնը՝ 1994 թ.՝ 112.43%: 2018 թ. այս ցուցանիշը կազմել է 91.29%[15]: ԵԱՏՄ անդամ երկրների շարքում առավել բաց է Բելառուսի տնտեսությունը:

---

[14] Կազմվել է https://www.trademap.org/ տվյալների հիման վրա:
[16] https://www.theglobaleconomy.com/Armenia/trade_openness/
[15] https://www.theglobaleconomy.com/Armenia/trade_openness/

Առևտրի դյուրացման կատարողականի համաթիվը, գնահատելով առևտրի ազատականացման միջոցառումների ազդեցությունը երկկողմ առևտրային հոսքերի և առևտրի ծախսերի վրա, ցույց է տալիս, որ ՀՀ-ում առաջընթաց է գրանցվել մասնավորապես փաստաթղթաշրջանառության պարզեցման և դյուրացման, գործընթացների ավտոմատացման և ընթացակարգերի արդիականացման ոլորտներում (գծապատկեր 5)[17]:

Գծապատկեր 5. ***Առևտրի դյուրացման կատարողականը***[18]

Հայաստանի կատարողականը բարձր է տուրքերի և վճարների ցուցանիշով: Տեղեկատվության մատչելիության, առևտրային համայնքներում ներգրավման, նախնական վճիռների, բողոքարկման ընթացակարգերի, ավտոմատացման և արտաքին սահմանային գործակալության համագործակցության ոլորտում Հայաստանի կատարողականը բարձր է միջինից ցածր եկամուտ ունեցող մի շարք երկրներից:

Անշուշտ, առևտրի ազատականացումը փոխադարձ առևտրի հոսքերի վրա դրականորեն անդրադարձավ մինչև 2018 թ., որից հետո իրավիճակը փոխվեց, և առևտրի տեմպը դանդաղեց մինչև 11.9%, իսկ երրորդ երկրների հետ պահպանեց բարձր շարժընթաց, հիմնականում՝ ապրանքների արտահանման արժեքային ծավալների մեծացման հաշվին: Ընդհանուր առմամբ, չնայած փոխադարձ առևտրի շարժընթացի դանդաղեցմանը, առանձին ապրանքային հոսքեր պահպանում են բարձր աճ և բնութագրվում են առաջանցիկ տեմպով:

ՀՀ-ն նաև ազատ առևտրային երկկողմ համաձայնագրեր ունի 8 երկրների՝ Վրաստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ: Միևնույն ժամանակ, ԵԱՏՄ անդամ երկրները ազատ առևտրի համաձայնագրեր են վավերացնում Եգիպտոսի, Հնդկաստանի, Իսրայելի, Սերբիայի, Սինգապուրի, Վիետնամի հետ:

Չինաստանի հետ ԵԱՏՄ առևտրատնտեսական համագործակցության պայմանագիրը բարձրացնում է կարգավորման համակարգերի թափանցիկությունը: Համարվելով համագործակցության «ոչ արտոնյալ ձև»՝ պայմանագիրը չի նախատեսում առևտրային ռեժիմի ավտոմատ ազատականացում

[17] http://www.compareyourcountry.org/trade-facilitation?cr=oecd&lg=en&page=0&visited=1
[18] http://www.intracen.org/country/armenia/General-Trade-Performance/

և չինական ընկերությունների ազատ մուտք ԵԱՏՄ շուկա, բայց զգալիորեն բարելավում է փոխհարաբերությունները Չինաստանի հետ: ԵԱՏՄ-Չինաստան համաձայնագիրը թույլ է տալիս զարգացնելու տարածաշրջանի աշխարհատնտեսական ներուժը և ստեղծելու հետագա գործնական զուգորդման հնարավորություններ: Այս շրջանակային համաձայնագրով նախատեսվում է ստեղծել ինստիտուցիոնալ հիմքեր, այսինքն՝ ինտեգրումը տեղի կունենա աստիճանաբար, ինչը երկրներին և գործարար հատվածին հնարավորություն կտա հարմարվելու առևտրի փոխադարձ ազատականացման նոր պայմաններին՝ ոլորտների ճիշտ ընտրության և շուկայի ասիմետրիկ բացման նախապայմաններով:

Իրանի հետ ժամանակավոր համաձայնագիրը ԵԱՏՄ արտահանողներին թույլ կտա շահավետ և արտոնյալ պայմաններով ամրապնդվելու իրանական շուկայում: Առևտրային համաձայնագիրը նախատեսում է սահմանափակ ապրանքային ընդգրկում, սակայն ներառում է գրեթե բոլոր հիմնական այն արտադրատեսակները (գյուղատնտեսական և արդյունաբերական), որոնց բաժին է ընկնում ԵԱՏՄ համախառն արտահանման շուրջ 55%-ը: Արտոնյալ ներմուծման ծածկույթը կազմում է Իրանից ԵԱՏՄ ընդհանուր մատակարարումների շուրջ 49%-ը[19]: Այս համաձայնագիրը հնարավորություն է տալիս տնտեսելու մաքսատուրքերի վրա և լրացուցիչ խթաններ է ստեղծում առևտրային փոխհարաբերությունների զարգացման համար:

Հայաստանի համար Իրանի ընդգրկումը եվրասիական ինտեգրման գործընթացում ունի ռազմավարական նշանակություն, քանի որ ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում Իրանի տեսակարար կշիռը կազմում է շուրջ 4-5%: Միևնույն ժամանակ, Հայաստանն անմիջական սահման ունի Իրանի հետ, ինչպես նաև առևտրային կոոպերացման փորձ:

Եզրակացություններ: Փաստորեն, գլոբալ առևտրային կանոններին փոխարինելու են գալիս տարածաշրջանային կանոնները: ԵԱՏՄ շուկայում առևտրի հետագա ազատականացումը, ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտներում համագործակցության խորացումը առևտրի հետագա բազմազանեցման և տնտեսական կապերի ազատականացման հիմքեր են պարունակում, ինչը կնպաստի ԵԱՏՄ միասնական շուկայի տարողության բարձրացմանը:

Համաշխարհային տնտեսությունում գլոբալ մրցակցության և անկայունության պայմաններում նման պայմանագրերի կնքումը հնարավորություն է տալիս անդամ երկրներին՝ ակտիվացնելու առևտրային կապերը նախապատվելի երկրների և տարածաշրջանների հետ, ինչպես նաև ԵԱՏՄ շրջանակներում դառնալու լրացուցիչ ներքին համախմբման աղբյուր:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ազատ առևտրի համաձայնագրերի կնքումը երրորդ երկրների հետ, առանց շուկաների փոխադարձ բացման հետևանքների վերլուծության, կարող է հանգեցնել փոխադարձ առևտրում բացասական հաշվեմնացորդի աճին, ԵԱՏՄ ներքին շուկա ավելի մրցունակ ապրանքների ներթափանցմանը:

Ուստի, արտաքին առևտրային գործընկերների հետ շուկայի հետագա ազատականացումը պետք է հենվի ԵԱՏՄ շահերի բազմակողմանի ուսում-

[19] http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/28-10-2019-1.aspx

նասիրության վրա, քանզի ազատ առևտրային համաձայնագրերի կնքումը ոչ միայն օգուտներ է ապահովում, այլև հղի է բազմաթիվ ռիսկերով:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԿԲ արտաքին հատվածի վիճակագրություն:
2. Доклад "О состоянии взаимной торговли между членами Евразийского экономического союза в 2018 году", М., 2018.
3. Гринец И.А., Казначеев П.Ф., Экономический рост и институциональное развитие в нефтегазовых странах. ЭКО-2015, N 4.
4. Корицкий А.В., Влияние человеческого капитала на экономический рост, учеб. пособие, Новосибирск: НГАСУ (Сибстрин), 2013.
5. Навроцкая Н.А., Сопилко Н.Ю., Регионализация в условиях постглобального экономического развития. Вестник РУДН, серия Экономика, 2015, N 4.
6. Приложение № 4 к договору о присоединении Республики Армения к договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года. Перечень товаров и ставок, в отношении которых в течение переходного периода Республикой Армения применяются ставки ввозных таможенных пошлин, отличные от ставок Единого таможенного тарифа Евразийского экономического союза.
7. http://www.irtek.am/views/act.aspx?aid=151628
8. https://www.wto.org/english/res_e/statis_e/wts2019_e/wts2019chapter06_e.pdf
9. https://www.globaltradealert.org/global_dynamics/day-to_0611
10. https://www.trademap.org/
11. https://www.theglobaleconomy.com/Armenia/trade_openness/
12. https://www.theglobaleconomy.com/Armenia/trade_openness/
13. http://www.compareyourcountry.org/trade-facilitation?cr=oecd&lg=en&page=0&visited=1
14. http://www.intracen.org/country/armenia/General-Trade-Performance/
15. https://www.wto.org/english/res_e/statis_e/wts2019_e/wts2019chapter06_e.pdf

СИМОН СНГРЯН
Соискатель кафедры международных экономических отношений АГЭУ

Открытость экономики и Армения.– В рамках членства в ВТО, Армения уже взяла на себя обязательства по либерализации торговли и институционализации национальных рынков. На данный момент процесс либерализации торговли замедлился в рамках ВТО, в то время как эти процессы ускорились в рамках региональных торговых соглашений, что, конечно, не устраняет чувствительные сектора, требующие протекционизма. Анализ показывает, что либерализация торговли оказала положительное влияние на показатели внешней торговли Армении. Однако дальнейшая либерализация рынка с внешнеторговыми партнерами, подписание соглашений о свободной торговле с третьими странами без анализа последствий взаимного открытия рынков может привести к росту отрицательного торгового баланса, проникновению более конкурентоспособных товаров на внутренний рынок, что требует комплексного изучения интересов членов ЕАЭС.

Ключевые слова: *открытость торговли, ЕАЭС, открытая экономика, ВТО, таможенные пошлины.*
JEL: F10, F15

SIMON SNGRYAN
PhD Student at the Chair of International Economic Relations at ASUE

Open Economy and Armenia.– As part of the WTO membership, Armenia has already committed itself to trade liberalization and institutionalization of national markets. The process of trade liberalization has slowed down in the framework of the WTO, while these processes have accelerated in the framework of regional trade agreements, which, of course, does not eliminate the sensitive sectors that require protectionism. The analysis shows that trade liberalization had a positive impact on the foreign trade indicators of Armenia. However, further liberalization of the market with foreign trade partners, signing free trade agreements with third countries without analyzing the consequences of mutual opening of markets can lead to an increase in the negative trade balance and the penetration of more competitive goods into the domestic market, which requires a comprehensive study of the interests of the EAEU members.

Key words: *open trade, EAEU, open economy, WTO, customs duties.*
JEL: F10, F15